

ԿԼԹՈՒԽ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիայից արտաքսուած միաբանութիւններէն շատերը զիմել են դէպի Փոքր Ասիա, Տաճկաստան և Պարսկաստան, այնտեղ որոնելու իրանց գործունէութեան համար ապաստանարան։ Ունենալով այդպիսի նպատակ՝ այդ միաբանութիւններն արդէն սկսել են իրանց քարոզչական գործունէութիւնը և որոշում են ուղղափառ և միւս դաւանութեանց պատկանող քրիստոնեաներին։ Նորա արդէն սկսել են հիմնել զանազան յարմար վայրերում ժողովրդական և ընդհանուր կրթական ուսումնարաններ, ամէն կերպ աշխատելով աշակերտներ դրաւել զանազան ազդութիւններէն։ Ի նկատի ունենալով սոցա գործունէութեան վնասակարութիւնն ուղղափառ եկեղեցու նկատմամբ, տիեզերական պատրիարք Իոսեփ Գ-ը շտապել է մի շրջաբերական թղթով զգուշացնել իւր հօտը դուրսնէն։ Բացատրելով նոցա գործունէութեան նպատակը, նա յորդորում է ծնօղներին իրանց որդոց չուղարկել նոցա հիմնարկած ուսումնարանները, որոնք ծառայում են միմիայն մարդիկ որոտալու, և ոչ թէ քրիստոնէական բարիք յառաջ բերելու համար։

— Եւրոպական մի քանի բողոքական թերթեր արդէն սկսել են իրանց երկիւղն արտայայտել, տեսնելով կաթոլիկութեան հակայական քայլերով տարածուելը, դժբաւսում են, որ եթէ միջոցներ ձեռք չառնուին կաթոլիկութեան քարոզչութեան առաջն առնելու՝ զարմանալի յաջողութիւն կունենայ նա օտար երկրներում, ինչպէս որ է այժմ Հիւսիս Ամերիկայում։ Ուղիղ 100 տարի առաջ Հռոմը, եկեղեցին այնտեղ ունէր միայն մի փոքր համայնք, բազկացած 45,000 հոգուց, 33 քահանաներով, որը երկիւղ կրելով բողոքական հին կառավարութեան հալածանքից՝ ծածուկ էր կատարում իւր ծիսակատարութիւնը։ Իսկ այժմ նա ունի իւր հաշուով 14,000,000 կաթոլիկ անդամ, 1 կարդինալ, 17 արքեպիսկոպոս, 77 եպիսկոպոս, 14 եկեղ. բաժանմունքով, 82 դիոցէզով և 5 առաքելական յաջորդութեամբ։ Առաջուայ 33 քահանայի փոխարէն, այժմ մի ամբողջ զօրաբանակ է ներկայացնում նրա քահանայական դաստիարակը՝ թուով 12,429 քահանայ, 10,639 եկեղեցի։ Նախկին մի ուսումնարանի փոխարէն այժմ ունի 7 համալսարան, 81 թեմ, գպրանոց, 163 տղայոց և 619 օրիորդաց և 3857 ծխական դպրոցներ, 244 ապաստանարան և 877 բարեգործական հաստատութիւններ։ Մինչդեռ 100 տա-

ընդամենը թացքում Միացեալ նահանգների բնակչութիւնը աւելացել է 9 անգամ, կաթոլիկների թիւը աճել է 300 անգամ, կաթոլիկների բազմութեամբ նիւ Եօրքի համայնքը Գ. տեղն է բռնում, իսկ Ամերիկայում գլխաւոր և առաջին տեղը՝ ունենալով 1,200,000 անգամ: Ամերիկական լրագիրները նոցա այսպէս բազմանալու գըլխաւոր պատճառ համարում են 1) որ դաղթականները մեծաւ մասամբ եկել են Իրլանդիայից, Աւստրիայից, Լեհաստանից, Իտալիայից, սրոնք բոլորն էլ կաթոլիկ էին. իսկ Գերմանական դաղթականութիւնից կէսն համարեա կաթոլիկ էր. 2) Հռովմէական կաթոլիկ եկեղ. բնակչութեան բազմածնունդ լինելը. 3) Ամերիկայում եկեղեցին բաժանուած լինելով կառավարութիւնից միշտ ազատ է դործելու, վայելելով դորա համար քաղաքացիական օրէնսդրութեան հովանաւորութիւնը: Միացեալ նահանգներում, հաշուելով նաև Փիլիպպեան կղզիներին 8,500,000, Պորտորիկոյի և Հաւաննայի 1,000,000 կաթոլիկներին, կայ այժմ մօտ 20,000,000 Հռովմէական եկեղեցուն պատկանող ժողովուրդ, որով նա կազմում է Հռովմէական եկեղ. չորրորդ պետութիւնը. իսկ նուիրաբերութեան կողմից, որ իւրաքանչիւր տարի ուղարկուում է պապին «Ս. Պետրոսի Լումայ» անունով, առաջին տեղն է բռնում ամբողջ աշխարհում: Բայց չնայելով այսքան բնակչութեան Ամերիկայի հօտը միայն մի կարգինալ ունի անգամ Աոնկլավի, մինչդեռ Իտալիան 32 միլիոն բնակչութեամբ 38 կարգինալ անգամ ունի:

Հակառակ կաթոլիկ եկեղեցու մասին եղած այս լուստես հայեացքին և դորա համեմատ կազմած տեղեկագրին, մի քանի կաթոլիկական թերթեր, ինչպէս «Իրլանդիայի ժամանակագիրը», նկատում են, թէ չնայելով կաթոլիկութեան այդպէս աճման և նոր դարձողների մեծ թուին, կան նաև այդ եկեղեցուց բազմամիւս հեռացողներ. բնակչութեան մեծամասնութիւնը անտարբեր է դէպի իւր կրօնը և անհաւատ. թէև դժուար է դոցա թիւն իմանալ, բայց ամենայն հաւանականութեամբ նոքա մի քանի միլիոն են կազմում: 60 տարուայ ընթացքում Իրլանդիայից Հիւս. Ամերիկա դաղթել են երկուսուսուրդ հասակում 4½ միլիոն հոգի և ներկայումս դոցա թիւը հասնում է 10 միլիոնի. բացի դորանից նաև ուրիշ երկրներից դաղթած կան մի քանի միլիոն հոգի. եթէ այս բոլոր դաղթականները և սոցա որդիքը մնային կաթոլիկ, այն ժամանակ միայն Հիւս. Ամերիկայում պիտի լինէր 20 միլիոն կաթոլիկ. այնպէս որ 60 տարուայ ընթացքում նոցա կորուստը հաւասար է նոյն թուի կէսին. ուրեմն և 10 միլիոն հոգի պէտք է հեռացած համարուին կաթոլիկ եկեղեցուց:—Որովհետև այս տեղեկութիւնները տալիս են կաթոլիկ թերթերը, ուստի չի կա-

ընել ասել, թէ այն տեղեկագիրները, որոնք կազմում են կաթոլիկեկեղ. ներկայացուցիչները լաւատես հայեացքով, ըստ ամենայնի ճիշտ հաշիւներ են ընդլայնեցնում:

— Ըվեցարիայի Ֆրէյբուրգ քաղաքում օգոստոսի 18—21-ին տեղի է ունեցել մի համաժողով «ի պատիւ ամենասուրբ Սուրբ և Աստուածամօրն Մարիամու»: Ինչպէս յայտնեցին լրագիրները, եղուիտները գաղտնի հրահանգութիւններով աշխատում էին կամաց կամաց հող պատրաստել քրիստոնէական աշխարհում, որ մօտիկ ապագայում մի նոր դաւանութիւն հռչակուի. այդ նպատակով և յատկապէս կազմուած էր Ֆրէյբուրգի համաժողովը: Ժողովն այսպիսի մի որոշումն արաւ. «Կաթոլիկ. ս. եկեղեցու վարդապետութեամբ Մարիամ կոյսը մարգկային մարմնով համբարձել է երկիւք. այս պատճառով ս. Հօր (պապի) անձնուէր որդիները խնդրում են, որ ս. Պետրոսի յաջորդը իւր անսխալ վարդապետական պաշտօնի զօրութեամբ հանգիստաւոր կերպով ի լուր ամենեկուն յայտարարէ այդ դաւանութիւնը»: Համաժողովում անբաւարար էին եղուիտները: Պերմանական յանձնաժողովում գլուխ էր Պրինց Մաքս Սաքսոնացին: Իշխանութեան հրամանով համաժողովից առաջ պատուաւոր կանոնիկոս Սլինս Սրոստան, Ժընէվի և Լօզանի եպիսկոպոսի ցուցման համաձայն ուղարկեց Իտալիայի ընդ որ քահանաներին հետևեալ շրջաբերականը. «Իմ և ինձ հաւատացեալ հօտի կողմից ես ի բոլոր որտէ յայտնում եմ, որ համաձայն եմ Ֆրէյբուրգում տեղի ունենալիք համաժողովի սրտումներին, որ ի փառս Աստուծոյ և ի դովաբանութիւն ամենասուրբ Սուրբ պիտի լինի. ես ջերմ աղօթում եմ, որ Աստուածամօր մարմնով փառաւոր համբարձման ճշմարտութիւնը մեզ ամենեկուն յայտնէ Քրիստոսի անսխալ փոխանորդը. դահութիւն Աստուծոյ, կեցցէ՛ Մարիամը»:

— „НОВОСТИ“ լրագրի Փարիզի թղթակիցը գրում է, որ Փրանսիական կաթոլիկութեան բանը շատ վատ է դնում: Կաթոլիկութիւնը իւր ոյժերը խիստ լարել էր՝ աշխատելով ընդ միշտ ստորկացնել Փրանսիան, ինչպէս այժմ ստրկութեան մէջ է պահում Սպանիան, առանց մտածելու, որ Փրանսիան Սպանիա չէ: Փրանսիան հալածում է մուսուլման կաթոլիկութիւնը, շարունակ այնպիսի մերկացումներ է անում կաթոլիկ հոգևորականութեան կեանքից, որ մարդ սարսափում է ծայրահեղ աստիճանի բարոյական անկում տեսնելով նոցա մէջ: Այդ մերկացումները լոյս աշխարհ են հանում մի շարք խաբեբայութիւններ, ոճրագործութիւններ և քրէական յանցանքների տեսալիներ, որոնք տեղի են ունեցել և շարունակում են կատարուել կրօնական հաստա-

տութիւններն պատերի մէջ՝ սկսած կուսանոցներից և վերջացած վանքերով։ Թղթակիցը հրաժարուում է այս բոլոր խայտառակ երևոյթիւնների մասին առանձին և մանրամասն դրելուց, որոնք վերջին ժամանակ գրադեցնում են ազատամիտ լրագիրներին և դատաստանական քննութեան նիւթ տալիս, և յիշում է միայն երկու հերոսների դործերը, որոնք են եպիսկոպոս Բօղանքեր և վանահայր Գիւլիումէն։ Բօղանքերը Բօղենքերդ հրէայի որդին է։ Հայրը Տուրում երաժշտութեան սւտուցիչ էր, կաթոլիկութիւն ընդունեց և կաթոլիկ կնոջ վերայ էլ պսակուեց։ Բօղանքերն ուրեմն ոչ միայն ծննդեամբ էր կաթոլիկ, այլև մանկութիւնից սնուած լինելով կաթոլիկ հոգևորականութեան հովանու տակ, վերջերը թունդ կաթոլիկ դարձաւ և բարձր աստիճանների հասաւ։ Աղգակցական կապերի շնորհիւ նա կոմսուհի դ'Ալլըուֆերայի տանը դաստիարակութիւն էր անում և դորանով նորա առաջ նոր դռներ բացուեցան։ Գուրոր նա յայտնի էր որպէս սուրբ մարդ, քանի որ բացառապէս հոգևոր հաստատութիւններէ կազմակերպութեանն էր նուիրուած՝ որբանոցներ, պանսիոններ էր բաց անում, հաւատացնելով, որ ինքն այս բոլորը միայն հաւատացեալների և եկեղեցու բարօրութեան համար է անում։ Այն ինչ, իսկապէս նորա բոլոր գործերը եղել են փոքր և մեծ տեսակի խաբեքայութիւնների, որովհետև նա բարեգործական նպատակով առած փողերը շուայտ և անառակ կեանք վարելու համար է դործ դրել։ Երբոր երեք տարի առաջ պ. Կինոտո իւր «Վանոնիկոս Մովսէս» գիրքը հրատարակեց, որի մէջ տաղանդաւոր կերպով գուրս էր բերում Բօղանքերի ստոր վարմունքները, բոլորը կարծում էին թէ այդ ամէնը հեղինակի երևաեայութեան ծնունդ է։ Իսկ Կինոտոն՝ հեղինակը, միայն այն կարող էր ասել, թէ Վանոնիկոս Մովսէսը կենդանի մարդ է և յայտնի է իւր քաջադործութիւններով։—Ահա այս Բօղանքերի քաջադործութիւնները լրագրութեան բաժին են դառել, շնորհիւ վերջին ժամանակները բացուած մի մեծ խաբեքայութեան, որի մէջ մասնակցել են վանահայր Գիւլիումէնը և դրամատան տէր Մալեւայը։ Հարուստ տիկին Սիւէն հաւատում է իւր տաներէց վանահայր Գիւլիումէնին և սորա խորհրդով դրամատան տէր Մալեւային յանձնում է կէս միլիոնից աւելի Ֆրանկ զանազան գործերի համար։ Ութ իննը ամիս անցնելուց յետոյ, երբ տեսնում է, որ ոչ գումարն են վերադարձնում և ոչ էլ մուտք ցոյց տալիս, տիկինը ղիմում է իշխանութեանը և յայտնում, որ իրեն կողոպտեցին։ Գիւլիումէնը ձերբակալուում է, իսկ Մալեւայը ժողովում է բոլոր փողերը և փախչում։ Այս գործում առաջին տեղն էր ընում, որպէս բարձրաստիճան մարդ, և Բօղանքերը։ Բացի այս խաբեքա-

յուրօրինակ Բողանքերը տիկին Սիւէից փողեր էր առել և խոստացել, որ տիկնոջ ապահարդանի խնդրի համար կաշխատի Հռովմերթալ, պապի հետ խօսել և յաջողեցնել գործը. այն ինչ խաբւրապօրեան երևան դալուն պէս Բողանքերը փախչում է, փողերը կորչում են և ապահարդանի խնդիրն էլ անհետանք մնում: Տիկին Սիւէն թէև ուշ, բայց հասկացաւ, որ ինքը խաբւրայի հետ է գործ ունեցել և սորա դէմ էլ գանդատուեց իշխանութեան: Իշխանութեան ձեռք առած եռանդուն միջոցների հակառակ՝ փախստականները դեռ չեն գտնուել:

— Կաթոլիկութիւնը ծանր հարուած է կրել նաև Փրանսիական պալատում, ուր մի ազդու ճառ է խօսել Ժորժ Կլեմանսօն: Սկսելով նորանից, որ հասարակապետութեան պարտքն է պաշտպանել աղատութեան դադարւորը և Փրանսիական մեծ յեղափոխութեան յաղթութիւնը կատարեալ դարձնել, ճառախօսը խօսքը ուղղում է կղերականների դէմ, որոնց ասելով իբրև թէ կառավարութիւնը խղճի աղատութիւնն է սահմանափակում՝ կրօնական կարգերի համար նոր օրէնք հանելով: Բայց այդ սխալ է. սխալ է նոյնպէս և այն կարծիքը, թէ կառավարութիւնը ուղղում է կրօնը վերջացնել: Կառավարութիւնը ոչ ուղղում է և ոչ էլ կարողութիւն ունի այդ անելու: Յայտնի է, թէ ինչպէս առաջ են եկել կրօնները և անյայտացել, սակայն ոչ մի ժամանակ և ոչ մի կառավարութիւն կրօն չի ջնջել: Կառավարութիւնը ուղղում է վերջացնել միայն հռովմէական պապական քաղաքականութիւնը, իւր ատուածաբետական ձգտումներով: Կաթոլիկ եկեղեցին հաւատացնում է, թէ ինքը աշխարհային իշխանութիւն ունի, քանի որ հոգեւոր ոյժը իւր ձեռքին է: Ոչ միայն այդ ճշմարիտ չէ, այլ նա հոգեւոր ոյժ էլ չունի: Պապականութիւնը միշտ դէպի աշխարհային իշխանութիւնն է ձգտել, պապը եղել է կեսար, և եթէ ճանապարհին նորան ուրիշ կեսար է պատահել, ոչ մի միջոց չի խնայել հակառակորդին մէջտեղից վերացնելու համար: Փրանսիական Թաղաւորները պարտաւոր էին պապին հնազանդել. նոյն իսկ ամենալաւ Բուրբոններէց մէկը—Հենրիկոս, ստիպուած էր առելու այն նշանաւոր ցինիքական խօսքերը. „Paris vaut bien une messe“ (Փարիզն անշուշտ մի պատարագ արժէ): 2-է որ Լիւդովիկոս ԺԴ. ստիպուած էր կաթոլիկութեան դէմ մաքառել՝ Թոյլ չտալով, որ սա աշխարհային իշխանութեան հասնի, նայեցէք հռովմէական եկեղեցու Index-ին (արգելուած գրքերի ցուցակին): Այդ ցուցակից երևում է, որ կաթոլիկ եկեղեցին նգովքի է ենթարկում յառաջադիմութիւնը, դիտութիւնը, աղատքնութիւնը, միտքը: Արգեօք սա է խղճի աղատութիւնը: Մինչև

այժմս էլ այդ index-ը հռովմէական եկեղեցու քաղաքականութեան ընդունալ արտայայտութիւնն է: Այդ եկեղեցին երկու հոգեւունի. մէկը կրօնն է, որի ներկայացուցիչը քահանայութիւնն է՝ իսկ միւսը քաղաքականութիւնը, որի ներկայացուցիչները կրօնաւորական կարգերն են և կրօնաւորները: Ճառախօսը պահանջում է՝ վրակել ընդ որ կրօնաւորական կարգերը, որովհետեւ դոքա մարդկային և քաղաքացիական իրաւունքները պաշտպանող սկզբունքների դէմ են կռւում: Այդպիսի կարգեր վրակելը դեռ չի նշանակում ազատութիւնը վերացնել. ընդհակառակը կռուել այս սև ոյժերի հետ՝ նշանակում է դէպի ազատութիւն ձգտել: Կրօնական կարգի համար մարդկային իրաւունքը, մարդը նշանակութիւն չունի: Գերմանական ցեղերն ազատուելով պապական ճիրաններից անդորրութիւն են վայելում, թէ հոգեկան և թէ մարմնական զարգացմամբ անարդէլ առաջ են ընթանում: Իտալիան դէն ձգեց պապականութեան լուծը և այժմ նոր կեանք է տեսնում: Սպանիան և Լեհաստանը այդ լծի տակ հեծում են և բաժան բաժան լինում: Հասպա Ֆրանսիան, Ճառախօսը բացահայնում է. «Պատասխան տուէք գլխաւոր հարցին. Ֆրանսիան ուղում էք Հռովմին գերի դարձնել, թէ յեղափոխութեան դուստրը: Մենք կ'մնանք յեղափոխութեան ղինուորներ. մենք ձեռք կըբերենք քաղաքացիական խաղաղութիւն, բայց ոչ այն խաղաղութիւնը, որ Հռովմն է առաջարկում: Ո՛չ որ չի կարող մեզ խանդարել: Մեր ձեռքումն է այժմ ոյժը և մեր նպատակն է— հասնել ազատուած խղճի խաղաղութեան»:

Ճառը շատ մեծ տպաւորութիւն է թողել. նախագահ—նախարար Կոմպը և ուրիշները ջերմ շնորհակալութիւն են յայտնել ճառախօսին: Պալատը, ձայներն մեծամասնութեամբ՝ 163 ընդդէմ 90-ի, համաձայն է կառավարութեան կրօնաւորական կարգերը վերացնելու խնդրի մէջ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Աճգլիական եկեղեցի.

Դեռ շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ հեռագիրը լուր բերեց թէ Չինաստանում երկու անգլիական միսիոնարներ են սպանուել: Այս հանդամանքն ի նկատի առնելով և մէկ էլ այն, որ սպանողները հարկաւոր պատիժը չոտացան, անգլիական